Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15 մայիսի 2025 թվական

ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Է. Մարտիրոսյանս ծանոթանալով «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-47/25» ծածկագրով հրապարակված գնման ընթացակարգին

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար տնտեսական և սանհիգիենիկ միջոցների ձեռքբերման նպատակով 2025 թվականի մարտի 27-ին հրապարակվել է «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-47/25» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ ընթացակարգ): Ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Առոմա Լյուքս» ՍՊ ընկերությունը: «Առոմա Լյուքս» ՍՊ ընկերությունը համարվել է «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-47/25» ծածկագրով գնման ընթացակարգի 26-րդ չափաբաժնի նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Առոմա Լյուքս» ՍՊ ընկերության, իր կողմից ներկայացված դիմում-հայտարարության մեջ բացակայում է ընկերության տնօրենի էլեկտրոնային թվային ստորագրությունը: Ընկերությունը չի ներկայացրել նաև հրավերով պահանջվող 1.3 հավելվածը՝ ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգում (https://www.e-register.am/am/ կայքում) իրական շահառուների վերաբերյալ հաստատված հայտարարագիրը:

Նշեմ նաև, որ «Առոմա Լյուքս» ՍՊ ընկերությունը իր կողմից ներկայացված 26-րդ չափաբաժնի ապրանքի տեխնիկական բնութագրում չի նշել հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվող ապրանքի ֆիրմային անվանումը և տարայի ծավալի չափը:

Համաձայն ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման հավելված 1-ի 41-րդ կետի, մասնակցին առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերը նշված անհամապատասխանությունները: Սակայն, մասնակիցը չի ներկայացրել համապատասխան շտկումները, ինչի արդյունքում, համաձայն ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման հավելված 1-ի 42-րդ կետի, մասնակցի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով.

ՈՐՈՇԵՑԻ

1. «Առոմա Լյուքս» ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետ ո
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ՀՀ Ֆինանսների նախարարությանը և մասնակցին տրամադրելու օրվանից:
3. Որոշումը կայացնելու հաջորդող օրը այն տրամադրել ՀՀ ֆինանսների նախարարությանը և «Առոմա Լյուքս» ՍՊԸ-ին:

Գլխավոր տնօրեն **Է. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

Պատասխանատու՝ ԳԸԲ 1-ին կարգի մասնագետ,
Յ.Ա. Մանուկյան
Հեռախոս 33-40